# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

**Չարենցավանի համայնքապետարանը** ստորև ներկայացնում է իր կարիքների համար **ամանորյա տոպրակների (պարկիկների)** ձեռքբերման նպատակով կազմակերպված **<<ՉՀ-ԳՀԱՊՁԲ-19/1>>** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2019 թվականի փետրվարի 18-ին** կնքված N **<<ՉՀ-ԳՀԱՊՁԲ-19/1>>** պայմանագրում **2019 թվականի նոյեմբերի 29-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթերի պատճենները:

Փոփոխության առաջացման պատճառ 1: Պայմանագրով սահմանվել է, որ ապրանքների մատակարարումն իրականացվելու է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 01-ը, սակայն նախադպրոցական ուսումնական հաստատություններում կազմակերպվող տարեվերջյան միջոցառումների անցկացման ժամկետներում կատարվել են փոփոխություններ և անհրաժեշտություն է առաջացել պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման վերջնաժամկետը երկարաձգել:

Փոփոխության նկարագրություն 1: Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման վերջնաժամկետը երկարաձգվել է և կողմերի միջև կնքվել է համապատասխան համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում 1: ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետի 4)-րդ ենթակետ:

Պատվիրատու՝ **Չարենցավանի համայնքապետարան**